

ՄԱՆԵԼԱԼԻԺ

Թող տրեք տղաքնե-
րուն՝ ու արգելք մի՛
ըլլաք, որ ինձի
գան : Մատթ. .
ժԹ . 14 :

ԻՅՄԻՒՆԻՆԵ

1838

Գին , 50 փարսյ :

№ 94

212 1111-312 211111
1111111111111111111111
1111

1111 11

1111 1111111111111111111111
1111111111111111111111
1111111111111111111111

1111 1111111111111111111111

1111111111111111111111

1111111111111111111111
1111111111111111111111
1111111111111111111111

3321



1666-ԱԿ

ՏՐԱՆԿԱՍԱՐԺ


Որ պղտի տղոցը վարժութեանը

Համար աղէկ զրոյցներ կրնէ :

75-0288



12004



32.60-25

ԱՌՆԵՑՆԵՐ :

Աս Սանկաւարժը որ պղտի տղոցը վարժող կամ վարպետ ըսել է , անանկ գիրք մըն է որ պիտանի ու օգտակար ըաներու վրայ հարցմունքներ ընելով , և աղէկ աղէկ խրատներ խօսելով մէկ դաս մը կամ վարժութիւն մը կուտայ ամմէն կարգացող տղոցը . որ աս կերպով դիւրին սորվին ու գիտնան քիչէն շատ աստուածպաշտութեան ու Քրիստոնէութեան վերաբերեալ տեղեկութիւնները :

Ուստի՝ հիմայ դպրատան ան տղաքը , որոնք որ առջի կարգալու գիրքը կը լըմընցունեն , պէտք է որ՝ աս օգտակար գիրքը ձեռվընին առնեն կարգալու . որով իրենք Քրիստոնէական վարժութեան տակ մըտնան աս Սանկաւարժ գիրքին ձեռքովը :



Die Geburt Christi. In der Stube. 17. 11.

ՄԱՆ ԿԱՎԱՐԺ

Աճե՞նէն ապէ՛կ տղան :

Ո՞վ էր ան ամմէնէն աղէկ տղան , որ աշխարհի մէջն էր :

Յիսուս Քրիստոսն էր ան ամմէնէն աղէկ տղան , որ աշխարհի մէջն էր :

Յիսուս Քրիստոս ինծի պէս տղայ մըն էր :

Այո՛ , Յիսուս մէկ սղտըտիկ տըղայ մը եղաւ . Անիկա Հրէաստանի մէջը՝ Բեթլէհէմ ըսված մէկ տեղ մը ծնաւ : Իրեն մայրը Մարիամ կըսվէր . բայց ինքը Աստուծոյ Որդին էր : Մարիամին իջած օթեանին մէջը տեղ չի կար . ասոր համար երբ որ Յիսուս ծնաւ , մէկ մսուրի մը մէջ դրվեցաւ : Աս մսուրէն ՚ի զատ

ամենեւին մէկ ուրիշ օրօրոց մը չու-
նէր ինքը :

Աս երկնաւոր պղտըտիկ Տղան
տեսնալու համար ո՞վ եկաւ :

Քանի մը հովիւներ եկան . որով
հետեւ հրեշտակ մը իրենց զըուցեր
էր որ Փրկիչը ծնաւ : Արքոր Յիսուս
հինգ շաբաթվընէ եվելի թիչ մը մեծ-
կակ էր , իրեն մայրը անիկա Աստու-
ծոյ տաճարը տարաւ : Դնտեղ մէկ
բարի ծերունի մը կար՝ մարդարէ . իր
անունը Աիմէոն էր : Աս Աիմէոնը ան
պղտիկ տղան իր թեւերուն վրայ ա-
ւաւ , ու Աստուծոյ օրհնութիւն տը-
ւաւ . ինքը շատ ուրախ եղաւ՝ մեղա-
տորներուն Փրկիչը տեսնալուն հա-
մար : Մեծ ճամբորդութիւն ընելով
քանի մը օտարականներ եկան ա-
րևելքի կողմէն՝ ան երջանիկ Տըղեկը
տեսնալու համար : Մէկ աստղ մը
իրենց ճամբայ ցուցուց մինչև ան-
տեղ որ եկան : Աս մարդիկը հանե-
ցին ան Տըղեկին ընծայ տրվին՝ ոսկի

ու կնդրուկ և զըմուռ : Մէկ չար թա-
գաւոր մը աշխատեցաւ որ Յիսուսը
սպաննէ . բայց Աստուած անիկա իր
մօրը հետ Ազիպտոս խրկեց : Արբոր
աս չար թագաւորը մեռաւ , Աստուած
անիկա նորէն ետ բերաւ :

Յիսուս ին⁷⁶քոր մէկ տղայ մըն էր :
Անիկա մէկ սուրբ Տղայ մըն էր .
ամենեւին մեղք չի գործեց . ինքը մէկ
զէշ բան մը չէր մտմտացեր . ամե-
նեւին ինքը մէկ զէշ խօսք մը չէր զը-
րուցեր . ամենեւին ինքը անանկ բան
մը չէր ըրեր՝ որ զէշ բան էր . ամե-
նեւին ինքը անանկ բան մը մէկ դի չէր
թողուցեր՝ որ աղէկ բան էր : Աս Տը-
ղան մեծցաւ , ու եղաւ Սուրբ Հոգի-
ով զօրաւոր . ու Աստուծոյ շնորհքը
իւր վրայ էր : Ինքը հօրը մօրը հնա-
զանդ էր . Վուկ . ք . 51 : Ասիկա
մեծցաւ խելքով ու հասակով , և
Աստուծոյ ու մարդու քով հաւնելու
կերպով :

Ասիկա սիրելի տղայ մը չէր մի :

Ըմմէն աղէկ մարդիկ ինքը կըսի-
րէին . երբոր ինքը տաաներկու տար-
վան էր , այնչափ խելացութիւն ու-
նէր՝ որ տաճարին մէջը խորունկ կար-
դացողներուն քովը կընստէր , անոնց
մտիկ կընէր՝ ու անոնց քան կըհար-
ցունէր . ու ժողովուրդը կըզարմանար
իրեն խելքին վրայ՝ ու տըւած պա-
տասխաններուն վրայ :

Յիսուս Քրիստոս Ըստուծոյ Որ-
դին է . ինքը մարդ եղաւ՝ մեր հոգի-
ները փրկելու համար : Ընիկա բոլոր
աշխարհը ստեղծեց . անիկա աշխարհ
եկաւ մեռնելու համար . անիկա մե-
ռաւ մեր մեղքերուն համար : Ընիկա
մէկ զէշ քան մը չըրաւ . բայց չար
մարդիկները անոր հետ աղէկ չի վար-
վեցան , անիկա սպաննեցին :

Պզտի՛ տղաքներ՝ աղօթք ըրէք Ըս-
տուծոյ , որ ձեզ Յիսուսի նման ընէ .
Չանք ըրէք Յիսուսին նման ըլլալ :
Սիրեցէ՛ք Քրիստուած , ինչպէս՝ որ անի-
կա սիրեց նէ . հնազանդ եղիք ձեր

Ճնողացը , ինչպէս որ Յիսուս հնա-
զանդ եղաւ : Աւ անկէ ետքը դուք ա-
նիկա երկինքին մէջ պիտի տեսնաք ,
ու իր հետը պիտի ըլլաք :

Թէ որ դուք Վրիստոսի կը հաւա-
տաք նէ , ինքը ձեզ երկինքը կառնէ՝
երբոր մեռնելու ըլլաք նէ . և ասան-
կով դուք իր հետը պիտի ըլլաք յաւի-
տեանս :



Նրինք :

Մայր իմ՝ տեսնա՞ր մի բոլոր ատ-
բազմութիւնը , որ հիմայ նոր դրանը
առջեւն անցան :

Այո՛ , սիրելիս , տեսայ անոնք :

Բայց մայր՝ տեսա՞ր ան սընտուկը՝
որ չորս տղաք կըտանէին կտր :

Տըղաս՝ անիկա մէկ դազաղ մըն էր ,
ու ժողովուրդը կերթային դէպ 'ի գե-
րեղմանատունը :

Մայր՝ ի՞նչ է դազաղը :

Անիկա անանկ բան մըն է՝ որուն
մէջը մեռելները կըդնեն՝ անոնք թա-
ղելու համար :

Ան դազաղին մէջը մեռած մարդ
մը կա՞ր մի :

Այո՛ , պզտիկ տղի մը մարմին կար
ան դազաղին մէջը : Հատ անգամ
պզտիկ տղաքը ու աղջիկները կըմեռ-
նին կտր . երկու կամ էրեք օր առաջ
ան տղան ողջ էր :

Մայր , աղէկ զիտե՞ս որ ես պիտի
մեռնիմ :

Այս սիրելիս , ամմէնքս ալ պիտի
մեռնինք :

Բայց դուցէ ես պիտի ապրիմ մէկ
մարդ մը ըլլամ :

Կըցուսամ որ կըլլաս . բայց Աստ-
ուած զիտէ ամմէնէն աղէկը , ու ին-
քը կրնայ մէկ զի վերցունել՝ երբոր
դուն պզտիկ ալ ես : Այլ ~~ե~~ երթանք՝
ու նայինք ատ յուղարկաւորութեանը :
Հիմայ կրնանք կոր տեսնալ ժողո-
վուրդին բազմութիւնը :

Մայր՝ ինչո՞ւ համար ասոնք ամ-
մէնքը մէկգմէկու վրայ դիզվեր են :

Տըղաս՝ անոնք կայներ են գերեզ-
մանին բոլորտիքը . Կըտեսնաս , ա-
նոնք ատ փորված գետնին մէջը կը-
դնենկոր ան պատանքած պզտիկ տը-
ղան . ան է գերեզմանը : Ահա հի-
մայ հողով ծածկեցին . ալ ելլանք
երթանք :

Ո՛հ մայր իմ, ես կը վախնամ կոր
մեռնելու :

Ինչո՞ւ կը վախնաս կոր սիրելիս :

Լ՛նոր համար որ՝ ես չեմ ուզեր ան
գերեզմանին մէջը դրվիլ :

Ի՛մ տղաս, ան պզտիկ տղին մար-
մինը գիտցած ըլլաս որ՝ գերեզմանին
մէջ մէկ գէշ բան մը չըզգար, ան
մարմինը ալ ոչ կրնայ տեսնալ, ոչ
ալ կրնայ զգալ : Էիմայ ան տղին հո-
գին գերեզմանին մէջը չէ :

Մայր՝ հասա ո՞ւր է իր հոգին :

Տը՛ղաս՝ ես կը յուսամ որ անոր հո-
գին երկինքն է :

Ո՛հ մայր իմ, խօսէ ինձի ատ եր-
կինքին վրայ . ալ անատենը չի պիտի
վախնամ ես մեռնելէն :

Տը՛ղաս, ամմէն մարդ՝ որ կը սիրէ
Վրիստոսը, երկինք կերթայ : Եր-
կինքին մէջը մէկ գէշ բան մը չի կայ :
Սէկը անտեղ գէշ բան մը չի գոր-
ծեր . մէկը անտեղ հիւանդ չըլլար :
Սէկը ան երկինքին մէջը տրտում

չըլար : Երկինքին մէջը անոնք բնաւ
 չեն մեռնիր : Անտեղ Աստուած կայ .
 անտեղ է Յիսուսը . բոլոր աղէկ ժո-
 ղովուրդները անտեղն են :

Ա՛խ մայրս՝ ինտոր պիտի ըլլայ որ
 ես ալ երկինքը երթամ :

Քրիստոսին հաւատա՛ . Աստուծմէ
 վախցիր . ինչ բան որ աղէկ է նէ՛ սի-
 րէ՛ . ալ անատենը դուն բնաւ մեռնե-
 լու վախ մը չես ունենար : Ան ամմէնը
 որ ճշմարտապէս կըսիրեն Աստուած՝
 և անոր կըհնազանդին , պիտի եր-
 կինքը երթան :



Կարգում , ու պիտի իմանաս :

Կարգում , ու պիտի իմանաս . աս ան խօսքն է՝ որ մէկ մայր մը սովորու թիւն ըրեր էր ամմէն օր զըուցելու իր տղին : Ինքը կառնէր անիկա իր ծունկին վրայ՝ անոր զըուցելու : Պզտիկ տղան կուզէր գիտնալ շատ բաներ . բայց իր մայրը ամմէն իժիը չէր խօսեր անոր հետ , հասկա կըսէր , Կարգում , ու պիտի իմանաս : Ենատեն տըղան մըտմըտաց՝ ու ինքիրենը ըսաւ , Կուզեմ որ շատ բաներու տեղեակ ըլլամ : Մայրը ըսաւ որ , թէ որ կարգամ ես՝ պիտի իմանամ : Ետանկով անիկա շատ պինտ աշխատութիւն ըրաւ , ու շուտով սորվեցաւ կարգալը : Ետքը ալ ինքը շատ աղւոր գիրքեր կըկարդար : Ինքը անոնցմէ ամմէն մէկէն մէյմէկ քիչ բան սորվեցաւ : Քիչ մը ատենէն ետքը՝ ինքը կըրցաւ կարգալ իր մօրը գրքատունին մէջի

ամմէն զիրքերը : Եւ պղտի տղան
մեծցաւ՝ եղաւ մարդ մը : Ինքը շատ
բաներու վրայ զիտութիւն ունէր .
ինքը մէկ իմաստուն ու մեծ մարդ մը
եղաւ : Եւսիկա դատաւոր մը եղաւ , և
զնաց բնակեցաւ Հնդկաստանի մէջ :

Կարդա՛ , ու պիտի զիտնաս : Եւտ
աղէկ զիրքեր կան , ու թէ որ կու
զէս միայն՝ որ կարդալ սորվիս , դուն
կրնաս զիտնալ ան ամմէնը որ մէկ
աղէկ զիրքի մը մէջ կայ :

Քանի մը անխելք տղոցը հողը չէ՛
որ բան սորվին . չեն զիտեր անոնք՝
թէ ինտոր աղէկ բան է պատմութիւն
ներ կարդալը , որոնք զիրքերուն մէ
ջը կան : Ի՛մ պղտի տղեկս , աղէկ մը
աշխատէ՛ որ կարդալ սորվիս : Եւտ
կարդալն է՛ որ քեզ աղէկ պիտի ընէ՛
որչափ ատեն որ դուն ապրիս նէ :

Կարդա՛ , ու պիտի զիտնաս : Եւտ
խօսքը նորէն մէյմալ կըսեմ ,
անոր համար որ՝ կուզեմ որ դուն
միտքդ պահես աս խօսքը : Թէ

դուն կարգալ սորվիլ չես ուզեր տը
 դայուլթեան ատենդ նէ, ալ անանկ
 հաւանական է որ մինչև ետքը չես
 կրնար սորվիլ: Ամմէն օր մէյմէկ քիչ
 կարգա՛ . քու բարեկամներէդ խնդրէ՛
 որ ցուցընեն քեզի ինչ բան որ ին
 քիրմէդ չես կրնար սորվիլ նէ. Ա
 մենեկին զանց մի՛ ըներ մէկ դժուար
 բառ մը: Առանկով քիչ ժամանակի
 մը մէջ կարող պիտի ըլլաս ամմէն
 բառ հասկընալու: Աղէկ նայէ կե
 տադրուլթիւնները, ու ջանք ըրէ՛
 հասկընալու ինչ որ կարգաս նէ:

Գիտե՛ս դուն ան պզտիկ երգը —

«Տունն ու տեղը՝ ու ստացուածքը
 որ հատնի, կարգացողը անատենն ալ
 պատուական է էվելի»:

Կարգա՛, ու պիտի գիտնաս:

Ի՛նչ պիտի գիտնաս դուն: Պիտի
 գիտնաս դուն բոլոր բաները որ գիր
 քերուն մէջն են: Պիտի գիտնաս դուն՝
 թէ ինտո՛ր աշխարհը շինվեցաւ: Պի
 տի գիտնաս դուն ան մարդոցը վրայո՛

վը՛ որոնք աշխարհի մէջ ապրեցան
 հազար տարի առաջ : Պիտի գիտնաս
 դուն Միամին ու՛ Նոյին ու Մովսէսին ,
 ու Գաւիթին , և Մողոմոնին վրայով :

Կարդա՛ , ու պիտի գիտնաս՝ թէ ինչ
 բանի համար դուն ստեղծվեր ես :
 Պիտի իմանաս դուն՝ թէ ինտոր եր-
 կինքը կրնաս երթալ : Պիտի գիտնաս
 դուն Վրիստոսի վրայով , որ մեղա-
 ւորներուն համար մեռաւ :

Պիտի իմանաս դուն՝ թէ ինչ կըլ-
 լայ աղէկ տղոցը , երբոր անոնք մեռ-
 նին նէ : Էիմայ ալ միտքդ պահէ՛ ինչ
 որ կըսեմ՝ նէ , կարդա՛ ու պիտի հաս-
 կընաս :

9840-57
 3321



РУСЬСЬ 9840-57
 бд, Библио. кн.
 2004-ССР
 И. А. Мясников
 Ц. УЗУСН. ЧЗУСН.

Կայէն

Պասպա՛ , ո՛վ էր ան առջի մարդը՝
որ պինտ առաջ ծնաւ :

Տըղաս , առջի մարդը որ առաջ
ծնաւ՝ Կայէնն էր : Եղամ Թէպէտ ա-
ռաջին մարդն էր , բայց ինքը երկրի
հողէն եղած էր : Եւան ալ առաջին
կնիկն էր . ինքը Եղամին մէկ կողէն
եղած էր : Ետքը անոնք երբոր Եգէ-
մի պարտեղէն դուրս ձգվեցան նէ ,
իրենք երկու հատ զաւակ ունեցան :
Եւջինը Կայէն կըսվէր , երկրորդը
Եբէլ կըսվէր : Կայէնը չար էր , Ե-
բէլը արդար էր . Կայէն իրեն բարի
եղբայրը ատեց , անոր համար որ՝ Եւ-
առաժ Եբէլէն շնորհակալ եղած էր :
Կայէն օր մը Եբէլին հետ զաշտին
մէջը որ կըխօսէր՝ անիկա զարկաւ
մեռցուց :

Պասպա՛ , ո՛վ էր առջի մարդը՝ որ
երկինքը գնաց :

Տըղաս , առջի մարդը որ երկինքը

գնաց՝ Վքէլն էր : Երբոր իրեն չար
 եղբայրը զինքը սպաննեց , Վստուած
 իր հոգին երկինքը առաւ : Կայէնն էր
 ան առջի մարդը՝ որ մէկ մարդասպան
 մը եղաւ . ինքը մեռցուց Վքէլը ,
 պատճառն որ ինքը ատեց անիկա :
 Սոսկալի բան մըն է՝ երբոր եղբայր-
 ները մէկըզմէկ ատելու ըլլան նէ : Վ-
 սիկա էվելօք Վստուծոյ չուզած բանն
 է : Եղբայրները ու քոյրերը պէտք է
 որ՝ մէկըզմէկ սիրեն : Երբոր պզտի
 տղաքը ու աղջիկները իրենց եղբայր-
 ները ու քոյրերը չի սիրելու ըլլան ,
 իրենք անասունը գէշ են : Վլ անա-
 տենը սնոնք կայէնի նման են :

Դուն կուզե՞ս կայէնին պէս ըլլալ :

Օ՛հ չէ :

Վնանկ է նէ՝ սիրէ քու եղբայրդ ,
 սիրէ քուկին քոյրդ : Վոյրեր ու եղ-
 բայրեր՝ սիրեցէք մէկըզմէկ : Վնիկա
 որ իր եղբայրը չի սիրէր՝ խաւարի
 մէջ է . Սուրբ գիրքը կըզըուցէ : Վս-
 տուծոյ պատուէրը մեզի ասիկա է ,

Մէկը զմէկ սիրեցէք . « Չէ՛ կայէնին պէս՝ որ չարէն էր , ու իր եղբայրը սպաննեց » : կայէն մեռցուց իր եղբայրը : կայէն չարէն էր , այսինքն՝ Սատանայէն : Ինքը Սատանային հնազանդեցաւ : Թէ որ դուք ալ մէկը զմէկ կատէք՝ կայէնին նման էք . դուք չարին տղաքներ էք :

Պզտիկ տղաքը ու աղջիկները երբեմն իրարու դէմ կը բարկանան . ասիկա մեծ մեղք է . աս բանը իրենց կը սորվեցունէ որ մէկը զմէկ չի սիրեն : Շատ աղէկ բան է տեսնալ որ եղբայրները ու քոյրերը մէկը զմէկ կը սիրեն :

կայէն մէկ մարդասպան մը եղաւ . ինքը իր հարազատ եղբայրը մեռցուց : Ա՛հ՝ ինչ սոսկալի բան մըն է մարդասպան ըլլալը :

Հիմայ մտիկ ըրէ՛ ինչ կըսէ Յովհաննէս առաքեալը . « Ա՛վ որ իր եղբայրը չի սիրէր՝ մարդասպան է » . աս մէկ սոսկալի խօսք մըն է : Թէ որ

դուն քու եղբայրդ կամ քոյրդ չես սիրեր , դուն մէկ մարդասպան մըն ես քու սրտովդ :

Սիրելի՛ տղաք՝ թէ որ դուք բարկացաք նէ ձեր եղբօրը՝ կամ քրոջը դէմ , մէյմալ չի պիտի ընէք : Աստուծմէ խնդրեցէ՛ք՝ որ աս մեծ մեղքը ներէ Վրիստոսին համար :

Դուք շատ երջանկուծիւն կունենաք՝ թէ որ ամէն մարդ ինքըզինքներնուդ պէս սիրելու ըլլաք նէ : Միտքերնիդ բերէք , որ ամէն մարդ ձեր եղբայրներն են :



Նեցէք ձեզ անիծողները . ձեզ ատող
մարդոցը աղէկութիւն ըրէք : Մատթ .
Ե . 44 :

Մեր Տէր Յիսուս Վրիստոսը շատ
հեղահոգի էր . ըսել կուզեմ որ՝ ա-
նիկա չի սրդողեցաւ անոնց վրայ՝ որ
իր հետը գէշ վարվեցան : Արբոր
չար մարդիկները Յիսուսի զարկին ,
ինքն ալ անոնց դէմ չի զարկաւ : Ա-
նոնք իրեն շատ ճամբաներով գէշու-
թիւն ըրին , բայց ինքը մէկ գառնու-
կի մը պէս հեղ էր : Թէ որ դուն մէկ
ոչխարի մը մշտելու ըլլաս՝ կամ ոտ-
քովդ զարնելու ըլլաս , անիկա քեզ
չի խաճնէր՝ կամ չի ճանկրութէր :
Վեղի պէտք է որ՝ գառնուկի մը պէս
կամ աղաւնիի մը պէս անվնաս ըլլաս :

Արբոր չար մարդիկները մեր Փրկ-
կիչը խաչին վրայ դամեցին նէ , ինքը
անոնց մէկ վնաս մը ըրաւ մի :

Չէ , ինքը անոնց համար աղօթք
ըրաւ՝ ու ըսաւ , Հայր՝ ներէ ատոնց .
ինչու որ չեն գիտեր ինչ կընենկոց :

Գունն ալ աշխատէ՞ որ Վրիստոսին պէս ըլլաս :

Պզտի տղաքը մեծ բան մը կըսեպէն իրենց ծեծկըվելու կարող ըլլալը : Երբոր պզտի տղայ մը ծեծկըվիլ չուզէ նէ՛ մէկալ տղաքը անիկա վախկոտ կըկանչեն :

Ա՛մենեին բան մը չէ՛ վախկոտ կանչըվիլը . Վրիստոս ասկէց էվիլ շատ գէշ անուններով կանչըված էր : Շատ աղէկ է Վստուծոյ աչքին հանըվիլը՝ քան թէ անանկ չար տղոցը :

Սէկ մեծ բան մը չէ՛ ծեծկըվիլը : Գէշ մարդոցը մէկ քանին շատ աղէկ ծեծկըվող կըլլան . ի՞նչ օգուտ ասկէց : Սէկ շուն մը կընայ ծեծկըվիլ մէկ ուրիշ շունի մը հետ : Սէկ գայլ մը կընայ ծեծկըվիլ . մէկ օձ մը կըրնայ ծեծկըվիլ . մէկ մամուկ մը կընայ ծեծկըվիլ : Գունն շունը՛ ու գայլը՛ ու օձը ու մամուկը՛ կըսիրե՞ս մի իրենց ծեծկըվելուն համար : Վստոք շատ աղէ՛կ են մի՛ իրենց ծեծկըվել

կրնալնուն համար : Գուն ամենեին
քու կեանքիդ մէջը ծեծկըվուք չընե-
լով երկինքը կրնաս երթալ : Կ՛նչ՝
կըվախնաս որ դուն վախկոտ պիտի
ըսվիս ծեծկըվել չի կրնալուդ հա-
մար : Իրաւցընէ՝ ես աղէկ դիտեմ՝ որ
դուն կըվախնասկոր . վախկոտ մէկ մը
ըլլա՛լն ալ մեղք է : Միայն թէ դուն
ինքրզինքդ կրնաս սրահել ծեծկըվուք
ընելէն՝ առանց վախկոտութիւն ու-
նենալու :

Քանի մը տղաք՝ որ կըծեծկըվին
ալ , վախկոտ են անանկ ալ : Կ՛նչու որ
անոնք կըվախնան որ ծաղը չըլլե-
վին : Ես մէկ անպիտան վախկոտու-
թիւն մըն է . դուն ամմէն բանէն ա-
ւելի մեղքէն շատ վախցիր . վախցիր՝
որ Եստուծոյ աչքէն կիյնաս : Գուն
էվելօք Եստուծմէ՛ վախցիր շատ . ու
ասանկ՝ Եստուծոյ նայելով , չի պիտի
վախնաս մարդոցմէ :

Սուրբ Եւտարանը կըսէ թէ՛ Մի
վախնաք անոնցմէ՛ որ մարմինը կըս-

պաննեն, ու հողիին բան մը չեն կըր-
 նար ընել. հապա էվելօք անկէց
 վախցիք՝ որ կարող է հողին ալ մար-
 մինն ալ դժոխքը ձգել: Սաղմ. Ժ. 28:



Ի նշողէս պէտք է զբերվել :

Ի՞նչ է ատ , ինչո՞ւ կուլայ տա պըղտի աղջիկը :

Աիրելի՛ տըղաս , անիկա ասօր շատ տրտմութիւն ունի :

Բայց ի՞նչ է իր տրտմութիւնը՝ մայր :

Տըղաս , անոր համար ինքը տըրտում է որ՝ իր վրայովը ինքը մէկ գէշ բան մը գտաւ :

Մայր , իրաւցընէ ատիկա մէկ շատ գէշ բան մը պիտի ըլլայ , որ ինքը ատչափ կըլայունէկոր :

Հատ գէշ բան մըն է՝ տըղաս :

Մայր , զըուցէ՛ ինձի , ատ ի՞նչ բան է՝ որ ինքը իր վրայ գտաւ :

Աիրելի՛ տղաս , ինքը ան բանը իր վրայ գտաւ՝ որ ինքը մեղաւոր մըն է . ինքը Մստուածաշունչին մէջը երբոր կարդաց , ու սորվեցաւ որ Մստուածամէն օր մեղաւորներուն վրայ սրդո՞ղած է , ալ ինքը հասկըցաւ որ Մս

տուած իր վրայ ալ սրդողած է . աս
բանն է՝ որ ինքը անչափ տրտում
ըրաւ :

Մայրիկ՝ ես ալ մեղաւոր եմ մի :

Այո՛ սիրելի՛ զաւակս , դուն ալ
մէկ մեղաւոր մըն ես : Ետ անգամ
դուն մեղք գործած չե՞ս մի :

Հրամե՛րես՝ մայրիկ :

Ամէն իժիք քու հօրդ մօրդ հնա-
զանդ ես մի :

Չէ՛ մայրս , երբեմն ես շատ անհը-
նազանդու՞թիւն ըրի :

Ամենեւին դուն մէկ գէշ բան մը
ըրած չե՞ս մի :

Հրամե՛րես մայրիկ , ես զիտեմ որ
չար տղայ մըն էի ես :

Տըղաս , դուն ամենեւին գէշ բան
մը զըուցած չե՞ս մի :

Այո՛ մայրիկ :

Անանկ է նէ չե՞ս նայիր՝ որ դուն
մէկ մեղաւոր մըն ես : Աուն ամենե-
ւին Ատուած քո- բոլոր սիրտովդ չի
սիրեցիր . դուն ինքը ինքդ կըսիրես
Կոր՝ էվելօք քեզի՛ հաւնեցունեւ , քան

Թէ Մտուծոյ հաւնեցունել քեզ :
 Մնատեն պզտիկ տղան սիրտը կոտ-
 րած՝ աչվըները վար կախեց գետինը
 նայելու ամընալէն . ելաւ զնաց ինք-
 նիրէնը մէկ սենեակ մը մտաւ , ու
 կըմտմտար թէ ինտոր ինքը մէկ գէշ
 մըն է եղեր : Մնատեն մայրը իրեն
 կանչեց , շոս եկոր Ասրապետ՝ մէ-
 կալ սենեակին մէջը նստիր՝ ի՞նչ
 բանի վրայ կըմտմտաս կոր :

Մայրիկ , իմ սրտիս վրայ մըտմը-
 տուք կընեմկոր , ես զիտեմ որ իմ
 սիրտս չար է , ու անիկա չուզէր կոր
 Վրիստոսը սիրել :

Տըղաս , ատիկա մէկ շատ գէշ բան
 մը չէ՞ մի քեզի՞ որ Վրիստոս չես սի-
 րեր :

Օ՛ , այո՛ մայրիկ , ես կըզարմանամ
 որ Տէրը ինձի ասչափ թող տըլաւ
 երկար ապրելու , երբոր ես ասանկ
 գէշ խորհուրդ ու ամուր սիրտ մը ու-
 նեցած եմ նէ : Արվախնամ որ բնաւ
 չի պիտի երթամ ես երկինքը . ես կի-

մանամ կոր՝ որ շատ թշուառ եմ : Ա՛հ
 իմ մայրս , ինձի համար աղօթք կընե՞ս
 մի Մտուծոյ :

Անատենը իր մայրը գետինը
 ծունկ չոքեց՝ ու աղօթք ըրաւ իր տը-
 դին համար : Ինքը աղօթք ըրաւ՝
 որ Տէրը անոր մէկնոր սիրտ մը տայ ,
 և անոր մեղքերը ներէ : Ատքը ինքը
 ըսաւ Արարպետին , Իմ սիրելի՛ տղաս՝
 ուրախ եմ ես , որ դուն կը մտմտաս կոր
 իասանկ բաներուն վրայ : Գուն կու-
 ղե՞ս պիտնալ՝ թէ ինտոր պիտի փըր-
 կըվիս :

Հրամներես սիրելի մայրս , կուզեմ
 իրաւ որ :

Անատեն իր մայրը ըսաւ անոր Ա-
 ռաքեալին խօսքը , Տէր Հիսուս Վը-
 րիստոսին հաւատա՛ , որ փրկըվիս :
 Գործ . ԺԳ . 31 : Վրիստոս խաչին
 վրայ մեռաւ՝ մեղաւորները խալըսե-
 լու համար : Անիկա կարող է խալը-
 սելու մեղաւորներուն պինտ մեծը :
 Անիկա կուզէ՛ որ քեզ հիմայ խալըսե-
 աս բանին դուն հաւատա՛ , յոյսդ Վը-

ըխտասին վրայ դիր : Վրիստոսի ա-
րունը ամմէն կերպ մեղքերէն մարդը
կըսրբէ կըմաքրէ : Մտուած կըսիրէ
ան Վրիստոսը, ու անոր կըլսէ : Մ-
տուած քեզ Վրիստոսին համար կը-
սիրէ . դուն հաւատա՛ աս բանին :

Ան բոպէին մէջը 'որ դուն ճշմա-
րիտ սիրտով կըհաւատաս, քու հոգիդ
մեղքէ ազատ կըլլայ :



Մէկ ուրի ուրայ Է :

ԱԼ ժամանակ է՝ որ իմ սիրելի
 հայրս տուն պիտի գայ . նայէ՛ , արևը
 մարը մտած է , երկինքը մթըննալու
 վրայ է : Կուզեմ որ հայրս տուն գայ .
 ինքը ալ քանի մը ըսպէէն աստեղ
 կուգայ : Պապաս իր զաւակը կըսիրէ .
 հիմայ անիկա իր գործին մէջն է : Ար-
 բոր անիկա իր գործը կըգործէ , իր
 պզտի զաւակը միտքը կըբերէ . ու
 երբոր անիկա տուն կուգայ՝ իս իրեն
 ծունկին վրայ կառնէ . անատեն ինքը
 իս կըզրկէ՝ ու կըպազնէ :

Ես գիտեմ որ ինքը իս կըսիրէ . և
 գիտեմ իրեն ըսելու բանը ինծի . ին-
 քը պիտի ըսէ ինծի՝ Բարի զաւակ մը
 եղանք մի : Աս պիտի աշխատիմ որ բա-
 րի ըլլամ . թէ որ ես բարի զաւակ
 ըլլամ՝ իմ հայրս ուրսիս պիտի ըլլայ :
 Հայրս շատ տրտում կըլլայ՝ երբոր ես
 չար ըլլամնէ . ես ինքըզինքս իմ հօրս
 պիտի հաւնեցունեմ . ես պիտի հնա-

զանդ ըլլամ իրեն . ես պիտի ընեմ՝
ինչ որ ինքը ինձի զրուցէ նէ :

Օ՛ ահա իմ սիրելի պապաս եկաւ .
պապա՛ շատ ուրախ եմ որ հրամանքիդ
տուն գալը տեսայ : Ա՛ էր հրամմէ ,
մայրս հրամանքիդ կը սպասէիք . կե-
րակուրը պատրաստ՝ սեղանը դրված
է . հրամմէ՛ սիրելի հայրս , սեղանը
ես քու քովդ պիտի նստիմ :

Հիմայ իմ հայրս պիտի խօսի իմ
հետս :

Ա՛յո՛ զաւակս , կուզեմ քեզի հետ
խօսիլ : Վիտեն՝ մի՛ ո՞վ ստեղծեց
քեզ :

Ա՛յո՛ հայր՝ գիտեմ , Աստուած
ստեղծեց :

Վիտեն՝ ո՞վ է մեղաւորներուն
Ֆրկիչը :

Ա՛յո՛ հայր , Տէր Հիսուս Բ՛աթա-
տոսն է մեղոււորներուն Ֆրկիչը :

Հա՛տ աղէկ տըղաս . բայց Վրիս-
տոս քոլոր մեղաւորները կը փրկէ՞ մի :

Չէ պապա . Ընիկա իրեն հաւա-
տայողները կը փրկէ :

Յիսուս կրնայ մի փրկել քեզ :

Այո՛ , որովհետեւ Ըստուած է :
Ըստուած ամմէն բան կրնայ ընել .
Ըստուած ամմէն մեղաւորը կրնայ
փրկել . Յիսուս կրնայ փրկել իս ու
քեզ , ու աշխարհի մէջ ամմէն մար-
դիկը :

Տըղաս , Յիսուս կուզէ՞ մի քեզ
փրկել :

Այո՛ պապա , անիկա խաչին վրայ
մեզ փրկելու հասար մեռաւ : Թէ որ
ինքը չուզէ լու ըլլար մեզ փրկել ,
չէր մեռներ խաչին վրայ մեզի համար :

Իմ սիրելի՛ զաւակս՝ ալ ժամանակ
է որ դուն անկողին երթաս պառկելու :

Հրամներես պապա , քունս կուգայ
կոր :

Անկողին երթալ պառկելէդ ա-
ռաջ ընելու բան մը ունի՞ս դուն :

Այո՛ , պէտք է որ գետինը ծունկ
չոքեմ՝ ու ազօթք ընեմ Տէրոջը :

Տ Գ Լ Ե Յ Ս Կ

Տըղաս՝ ի՞նչ բանի համար աղօթք պիտի ընես :

Լստուածմէ պիտի խնդրեմ՝ որ իմ ամմէն մեղքերս ներէ ինծի :

Դուն մեղաւոր ես մի :

Լյո՛ , թէպէտ ես շատ պզտիկ եմ , բայց մէկ մեղաւոր մըն եմ :

Կրնո՞յ Լստուած քու ըսածներդ լսել՝ երբոր խնդրես նէ իրմէն :

Լյո՛ պապա , Լստուած ամմէն տեղ է . անիկա երկինքն է . անիկա երկրի վրայ է . անիկա ամմէն բաները կը լսէ : Լս աղէկ զիտեմ՝ որ մեր ամմէն զրուցած խօսքերնիս անիկա կը լսէ : Լս հիմայ աղօթք պիտի ընեմ՝ որ մէկ բարի զաւակ մը ըլլամ :

Գիշեր բարի :





Ի՛նչ ուշխարհագրութեան ի՛նչ խոսքերն ի՛նչ խոսքերն : Յոս. Ժ . 27 :

ՆՐԿՈՒ

ԳՆՈՒՆՈՒԿՆԵՐՈՒՆ

ՊԵՏՄՈՒԹՒՒՆԸ:

Սերելէ՛ Կարգ :

Հիմայ որ պիտի պատմըվի երկու
հատ պղտըտիկ ոչխարներու վրայ նէ՛
անոնք ճիշդ ձեզի պէս պղտի տղոցը
նման են : Ե՛ն բարի Հովիւն ալ՝ որուն
վրայ պիտի կարդաք , Տէր Յիսուսն
է . որն որ նշանակված է Յովհաննու
Լեւտարանին , Ժ . 11 . ու Լստուածա
շունչին ուրիշ տեղերը : Ե՛ն պոռա
ցող առիւծը՝ որ պիտի կարդաք հի
մայ՝ ան մեծ չար դէն է , որ Սատա
նայ կըսվի . որ ան ուրիշ անուններ
ալ ունի Սուրբ գիրքին մէջը . Թ ,
Պէր . Ե . 8 : Ե՛ն այծերը՝ որ պիտի
կարդաք հիմայ , չար մարդիկներն են ,
որ շատ կաշխատին իրենց պէս գէշ
ընելու պղտի տղաքը :

Թէ որ կուղէք զուրբ՝ որ իմանաք
 Թէ ինչ կըլլայ ան այժերուն , նայե-
 ցէք Սատթէոսի Վետարանին , ինչ
 գլուխին մէջի գըլլած բաները .
 32 , 33 :

Ուստի Թէ որ աս պատմութեանը
 մէջ տեղ մը չի հասկընալու բառեր ,
 նիդ գտնելի նէ՛ պէտք է որ հարցու-
 նէք գիտցող կարդացողներուն , որ
 ամմէն բառերը հասկընալով աղէկ մը
 իմանաք կարդացածնիդ :



Լըլո- Գառնո-ինէրոն պարսո-լէլոնը :

Հատ տարիներ առաջ՝ Մնատօլուէ մէջ մէկ լեռան մը վրայ հանդրպէցայ ես, որ երկու հատ պզտորտիկ ոչխարներ իրենց ծնած փարախին մէջէն դուրս ելեր էին՝ իրենց մօրը քովիկէն, որուն անունը Մնամեղութիւն էր, ու ինկեր էին մէկ կատղած առիւծի մը բերանը. որ անոնք իր ոտքին տակը առնելով՝ տիղմի մէջ ձգեց էր, ու իրենց կակուղ բուրդերը փղըքտեր էր, ու մեռնելու չափ անոնք վիրաւորեր էր: Մն առիւծը ասոնք անատեն կուղէր ուտել ու հացունել, թէ որ մէկ աղէկ հովիւ մը ունեցած չըլլային նէ, որ ան ճամբուն վրայ ինքը հանդրպէլով՝ մեղքըցաւ անոնց վրայ, ու խալըսեց անոնք ան առիւծին բերնէն: Մայց հովիւը աս բարերարութիւնը անոնց ընելու ատենը՝ ինքը զանազան սաստիկ վէրքեր ընդունեց ան կատղած առիւծին գէմը կենալէն: Ետքը ինքը ան պզտի

դառնուկները իր թւերուն վրայ ա
 ռաւ , որ տակաւին իր խոցերուն ա
 բունը այնչափ կը վազէր որ մինչև ա
 նոնց բուրդերուն վրայ կը կաթկը
 թէր , ու անոնց վրայի տիղմը կը լը
 ւար , որ անով իրենք թաթխը վեթ
 էին իրենց ինկած ատենը . ու ասան
 կով անոնք առաւ տարաւ իրենց չի
 գիտցած մէկ ճամբայէն՝ մէկ լեռան
 մը վրայէն , օրվան տաքութեան ա
 տենը . ու բերաւ անոնք վերջագէս
 մէկ ալլորիկ պզտի փարախ մը , որուն
 ամմէն կողմերը բարձր լեռներով պատ
 քաշված էր : Աս ձորը բոլորովին
 զատված էր քովը կըցված գետնէն
 մէկ վազուն ջուրի վտակով մը , որ
 ան տեղին բոլորտիքը չափէ դուրս ա
 ռատացիր էր , ու ան վտակին եզեր
 քը բուսած էին ծառեր պտուղներով
 ու անուշահոտ ծաղիկներով լեցուն .
 որ ան ծառը մէկ գուարձալի ստուեր
 մը ըլլեր էր անտեղ : Ալ աս փարա
 խին մէջը մտնալու միայն մէկ նեղ
 դուռ մը կար :

Հիմայ ան հովիւը կերևար որ իբ
 խոցերուն ցաւը բանի տեղ չէր դնէր,
 հապա մինակ իր խելքը միտքը ան
 գառնուկներուն հանդատութիւն ու
 մտիթարութիւն տալու վրայ էր : Աւ
 ան տիղմը չէ թէ միայն անոնց բուր
 դերէն լըւացված սրբըվեցաւ, ու սա
 պզտի կենդանիներուն ունեցած սաս
 տիկ տկարութիւնը վերցըվեցաւ, հա
 պա ինքը նաև էվելօք ջանք ըրաւ՝ որ
 անոնք լըւայ ան գետին մէջը : Աւ գոր
 ծածեց քիչ մը կակուղիկ բժշկըվելու
 տերևներ անոնց վէրքերուն . ու ետ
 քը յարմար կերակուր տալովը նորէն
 առողջ կենդանութիւն մը տըւաւ ա
 նոնց . ու կակուղիկ կանանց խոտերու
 վրայ իջեցուց՝ ծառերուն տակը, ու
 րոնք անոնց վրայ շուք կընէին արեւին
 տաքութենէն . և ասանկ սկըսեց ա
 նոնց հետ խօսիլ : « Ի՛մ գառնուկ
 ներըս, գիտէք որ ես ձեզ կըսիրեմ՝
 այնչափ շատ, որ մինչև իմ արունս
 ձեզի հաւար թափեցի . և ձեզ խա
 լըսեցի ան առիւծին ճանկերէն, ու

ձեզ շատ դիւրութեամբ մը բերի աս
 ազատ ու հանգիստ փարախը : Հիմայ
 թէ որ դուք գոհ կըլլաք աս տեղը կե-
 նալու , ու իմ ձայնս լսելով՝ անոր
 մտիկ կընէք , ես ձեր վրայ հոգ կըտա-
 նիմ կըպահեմ ամմէն բանով , որ ա-
 դէկ է՝ ու ձեր ուզածը : Աս ձեր վրայ
 հոգ կըքաշեմ , ու ձերին ադէկ նայող
 հովիւը կըլլամ . ահա աս փարախին
 մէջը շատ ադէկ խոտեր՝ ու էվելօք
 զովացուցիչ ջուրի աղբուրներ կը-
 գտնըվին . ալ ասոնք ձեզի կերակուր
 կըլլան : Ո՛վ իմ գառնուկներս , թէ
 որ դուք իս կըսիրէք , որ առաջ ես
 ձեզ սիրեցի . ու թէ որ դուք մէկըզ-
 մէկ կըսիրէք , ալ անկէ ետքը ես ձեզ
 մէկ շատ ազնիւ կանանչոտ գետին մը
 կառնեմ կըտանիմ : Այեցէք տա լե-
 աանը գլուխը , որ ճիշդ ձեր առջևը
 կիյնայ , և պիտի տեսնաք մէկ աղւոր
 ու գեղեցիկ քաղաքի մը ծայրերը : Ա-
 բեր կըփալիւրլայ կոր ան տեղի ծա-
 սերուն վրայ անանկ որ՝ անոնք մէկ
 ազնիւ օսկիի մը պէս կընմանցունէ

կոր : Ըտ ծառերուն անդիլիդին կա :
մէկ կանանչոտ գետին մը , որ անոր
վրայ ես շատ կուզեմ պտըտիլ , ու ա-
նոր վրայ իմ ոչխարներս ու գառնուկ-
ներս կատարեալ հանգստութիւն
կրնան գտնալ : Ըս տեղը ես պիտի
առնեմ տանիմ ձեզ՝ քիչ մը ապառ-
նի ժամանակէ ետքը , թէ որ դուք
ձանչնալու ըլլաք իմ ձայնս , ու իմ
կանչելուս մտիկ ընելու ըլլաք նէ :

Բայց թէ որ աս գաւիթէն դուրս
ելլալու ըլլաք , թէ որ դուք իս ձեր
վրայ հովիւ ունենալու չընտրէք , թէ
որ ան խոտին վրայ արծելու ըլլաք՝
որ ձեր մէկալ կողմի լեռանը վրայ
կէյնայ , իմ սիրոյ թեւերս ալ չի պի-
տի տարածվի ձեր վրայ՝ ձեզ հոգալու :
Եւ դուք պիտի իյնաք նորէն ան առիւ-
ծին զօրութեանը տակը , ուրկից որ ես
անգամ մը ձեզ խալըսեցի . որ ան
հիմայ ձեզ փնտրուելու վրայ է՝ որ
ձեզ ուտէ հատցունէ ” :

Ալ երբոր հովիւը դադրեցաւ խօ-
սելէն , թողուց անոնք անատենը ու

գնաց . բայց ամմէն օր նորէն կուգար
 ինքը անոնք նայելու . ու ամմէն օր
 ինքը կուտար անոնց իր սիրոյն մէկ
 քիչ մը զովացունելու փորձերը :

Աս երկու դառնուկներուն անուն
 ները Խաղաղութիւն և Տգիտութիւն
 էին : Ասոնք շատ աղէկ օրեր անցու
 ցին մէկտեղ աս զուարճալի գաւիթին
 մէջը : Պատուական կերակուր ունէին
 իրենք՝ և աղէկ մէկ շուք տեղ մը .
 իրենք մէկըմէկ կըսիրէին , ու գըլ
 խաւորապէս ան բարի հովիւը կըսի
 թէին . որ անոր իրենց քովը ըլլալը
 սիրտերնին ուրախութիւնով կըլե
 ցունէր : Ալ թէպէտ ան լեռները ա
 նանկ սահմանի մը մէջ էին ուր փո
 թորիկը պակաս չէր . և երբեմն անձ
 թեւ ու կարկուտ կիյնար ան պզտիկ
 փարախին վրայ . սակայն ան ծա
 ուերը հաստ ըլլալով՝ ու իրենց վրայ
 հովանի ընելով , ընդ հանրապէս ան
 դառնուկները կըպահէին եզանակին
 խառնակութենէն :

Մէկ օր մը հովիւը տեսնալու որ եկաւ անոնք՝ ինչպէս որ սովորութիւնն էր, խաղաղութիւնը դէպ 'ի առաջ վազեց՝ անոր դիմացը ելլալու, ու կըրցաթկուտէր անոր ոտքին քովերը՝ ինչպէս իր սովորութիւնն էր: Բայց հզիտութիւնը իր ետեւէն կամաց կամաց կը քալէր, և իր բարի բարեկամը տեսած ատենը քիչ մը տհաճութիւն կըրցուցընէր: Բայց հովիւին երեսը մէկ խոժողութիւն մը կամ խստութիւն մը չիկար, որ անիկա կընար վախցունել իրեն մօտենալու:

Ետքը հովիւը որ անոնք թողուց զնայ, դարձաւ խաղաղութիւնը անոր ըսաւ, «Դ՞նչ եղաւ քեզի՝ եղբայր. թէ որ հիւանդ ես՝ կամ մէկ բանի մը կարօտութիւն ունիս նէ, ինչո՞ւ համար չես իմացունէր մեր բարի տէրոջը քու նեղութիւններուդ վրայով. որովհետեւ ինքը մեզի ամմէն բանը առատ առատ կուտայ՝ որ վայելենք»:

«Իմ ուզած բանս անիկա չի տար

ինծի, պատասխանեց ՏգիտուԹիւնը .
 ինչու որ ինքը ան բանը յայտնի կերպով
 ինծի արգիլեց : Աս կուզեմ աս
 փարախը ձգել, ու երթալ տեսնալ
 տա՛ զուարճալի բլուրները, որոնք մեր
 աջ ու ձախ կողմերը կիյնան . ինտոր
 աղէկ է անոնց վրայ նայելը : Աս չե՛մ
 տեսնարկոր մի ան բազմատեսակ ծա-
 ղիկները՝ որ բուսած են անչափ առա-
 տուԹիւնով ան բլուրներուն դլուխը,
 ու ան զանազան գոյներով Թռչուննե-
 րը, որ նստեր ու կերգեն ան ծառե-
 րուն ճուղերուն վրայ : Աս կըտես-
 նամկոր ալ ան խոշոր խոշոր բուսած
 խոտերը՝ ան դալար ծաղիկներուն
 մէջը, և ոչխարները ու այծերը՝ որ
 կարածին ան պատուական կանանչ
 խոտին վրայ, ու պզտի դառնուկները՝
 որ անոնց քովերը կըցաթկուտենկոր :
 Ա՛հ իմ եղբայրս, ես չեմ կրնար եր-
 ջանիկ ըլլալ, քանի որ աս փարախին
 մէջը զոյված եմ, ու քանի որ ար-
 գիլված է ինծի աս ոչխարներուն

վայելած բերկրութիւններուն ժաւանդորդ ըլլալը” :

Խաղաղութիւնը աշխատեցաւ իր եղբայրը յորդորելու՝ ըսելով, որ ինքը մեծ յանցանք ըրած է ատարզելված բաներուն իր միտքը տալուն համար . և որ՝ պէտք է իրեն՝ որ ատանկ խորհուրդները իր միտքէն դուրս ձգէ : Բայց նայելով՝ որ Տգիտութիւնը իր խրատին մտադրութիւն մը չէր ընէր կոր, միտքը դրաւ որ իրեն ու իր եղբօրը մէջ անցած բոլոր բաները բարի հովիւին պատմէ տես գալուն ատենը, որ սովորաբար առտը վան երկինքին շաղը ան ծաղիկներուն ու խոտերուն վրայ իջած ատենները կուգար :

Խաղաղութիւնը աս բանը իր միտքը դնելէն ետքը, ու անանկով իր տէրոջը իմացունելու ատենը իր եղբօրը կամքը, բարի հովիւը դէպ’ի իրեն կանչելով Տգիտութիւնը՝ մէկ անպատմելի գթութեան մը նայված

քով, խօսեցաւ անոր հետ աս կերպով:

« Ի՛մ գառնուկս, ի՞նչ բանի համար դուն տժգոհ կըլլասկոր նստած տեղէդ, որուն մէջը ձեզ տեղաւորելու համար քիչ ծախք չըրի ես:

Ա՛նանկ մէկ բան մը՝ որ ձեզի խաղաղութիւն պիտի տար, ձեզմէ արգելեցի՞մի: Թէ որ ձեզ արգելեցի արծեւէն ատ լեռներուն վրայնէ, անիկա անոր համար էր՝ որ անտեղը դուք բան մը չի պիտի կրնաք գտնալ, միայն թէ լեզի ու վնասակար խոտեր. և անտեղ շատ կատաղի ու անզուժ թշնամիներուն վտանգին մէջ պիտի ձգվիք: Ա՛յլ իմ գառնուկներս, գոհ եղիք դուք՝ որ իմ փարախս կըբնակիքկոր. ու իմ ձայնիս ականջ կախեցէք. դուք իմ վրաս հաստատ կեցէք, ու ես ձեզ կատարեալ խաղաղութեան մէջ կըպահեմ: Բայց թէ որ դուք պիտի պտըտիք աս լեռները, գիտցած ըլլաք որ՝ պիտի փոխէք իմ դիւրին լուծս՝ նեղութեան ու տրտու-

մութեան՝ ու տառապանքի հետ, և իմ կակուղիկ հողածութիւնս՝ փառատող առիւծի կատաղութեանը հետ”:

Հովիւը ան գառնուկներուն կեցիք բարով ըսելէն առաջ՝ խնամով անոնք զգուշացուց, որ իրենց աչվըներուն զգուշանան, որ չըլլայ թէ խոտորին դէպ՛ի աս վտանգաւոր լեռները: Բայց Տգիտութիւնը չէր ուղեր ականջ դնել հովիւին զգուշացուցիչ ձայնին, ոչ ալ իր եղբօրը յորդորելէն կըշարժէր: Բոլոր երկար օրը ալ ինքը կըկայնէր ան ձորին գլուխները, կընայէր ան ծաղիկներուն վրայ՝ որ բուսած էին լեռանը կողմերը. ու մտիկ կընէր ան թռչուններուն ձայնին՝ որ ծառերուն վրայ կըձուլըւտային / մինչև որ ան ոչխարները ու այծերը՝ որոնք կուղէին բարի հովիւին ոչխարները դուրս ընել իրենց տէրոջը փարախէն, ուրախացան՝ երբոր իմացան որ Տգիտութիւնը ձանձրացեր էր իր տէրոջը ազնիւ

կառավարութենէն : Ալ սկըսեցին ա-
նոր մօտը ժողովրվիլ՝ որչափ կըցան-
նէ, ու կըյորդորէին անիկա՝ որ ան
փարախէն ինքը փախչի : Բսին իրեն
թէ՝ « Մեզմէ շատերը ատ հիմակվան
ձեր եղած ձորին մէջը կըկենային .
բայց մենք չի կըցանք անանկ անտա-
նելի արգելքներու դիմանալ, որոնք
մեր վրայ դրված էին . ասոր համար
մենք անոնցմէ փախանք, և հիմայ աս-
տեղ կատարեալ ազատութիւն կը-
վայելենք” :

Տգիտութիւնը դիւրին կերպով մը
հաւտաց ինչ որ աս ոչխարները իրեն
զրուցեցին նէ . ինչու որ ինքը կըցան-
կար ասանկ ընելու : Ալ մէկ աղետալի
առտու մը՝ անոնց յորդորանքին զի-
ջանելով, իր եղբօրմէն խաղաղու-
թիւնէն առաջ արթըննալով իր քու-
նէն, ելաւ ցաթկեց ան ջուրին վրա-
յէն՝ որ ոչխարներուն փակը կըպա-
տէր : Իրեն նոր ընկերները ընդունե-
ցին անիկա ուրախութեամբ, և խոս-

տացան որ անիկա տանին ան պատ-
ուական կանանց խոտերուն վրայ , որ
իրեն ամմէն օրվան կերակուր պիտի
ըլայ . ու անանկ ծաղկալից անկողին
ներու մէջ՝ ուր որ ինքը բոլոր երկար
գիշերը անուշիկ քուն պիտի քաշէ :

Տգիտութիւնը շուտով ուղեց որ
անոնց ետեւէն երթայ . բայց անատե-
նը կէսօր եղաւ , ու արևը կը փալ-
փըլար կոր լեռներուն վրայ՝ մէկ է-
րող տաքութիւնով մը , իրենց աս
կանանց խոտերուն հասնելէն առաջ ,
որ հեռուէն այնչափ զուարճալի կե-
րևար : Այլ հիմայ ինքը երբոր տաքու-
թենէն ու անօթութենէն մարմըրած
էր , ու ան լեռներուն կողմերը դէպ'ի
վեր ելլալով յոքնած էր , մեծ բերկ-
րութիւն մը գտնալ կը խոստանար ին-
քըզինքին՝ ան պատուական խոտին
վրայ խնճոյք ընելու ատենը : Ուստի
այծերէն մէկը ըսաւ իրեն . « Այլ հի-
մայ ուրախութիւն քշէ՛ դուն , ու քու
փափաքդ լեցնուր աս պատուական

կերակուրովը , և խմէ՛ ատ քու ոտքիդ .
տակէն վազած ջուրէն” :

Ա՛լ գառնուկը սկըսեց անյագաբար կերպով ասչափ աղէկ երեցած խոտերուն մէջը մտնալ կոտորտել . բայց այնպէս ինքը իրեն ուզածը գտնալու յոյսէն զըկըվեցաւ . ինչու որ խոտը իր բերանը կառնէր կըծամէր որ շատ լեղի էր : Ա՛նակ երբոր ինքը ան խոտէն շատ մըն ալ կերաւ , իր անօթութիւնը ամենեւին չանցաւ . պատճառն որ աս լեռներուն հողը չոր ցամաք ըլլալով խոտերուն սնընդարար զօրութիւն մը չէր իտար : Ընմայ ինքը ելլաւ գնաց ան ջուրին վազած տեղը , որ անոր այնչափ պայծառութիւնը մարդու շատ փափաքելի մըն էր : Սակայն , ինքը թէպէտ անյագաբար աս ջուրէն խմեց , բայց իր ծարուութիւնը ամենեւին չանցաւ . հապա անոր ներհակը՝ կերեւար թէ , էվելօք շառցաւ ծարուութիւնը : Ս՛էյ մըն ալ խըմեց ինքը , ու տակաւին էվելօք ծարաւ ե

ղաւ . ու անկէ ետքը շուտով սկըսեց զգալ բոլոր իր երակներուն մէջը մէկ տենդի տաքութիւն մը . ինչու որ աս աղբուրին բխած տեղին քովը շատ վնասակար խոտեր բուսած էին , և ամմէն իժիր իրենց թունաւոր տերեւները ու ծաղիկները տարածած ըլլալով ան ջուրին վրայովը , անոր մէկ անանկ որպիսութիւն մը տըլած էին՝ որ միշտ անոր համը աւնողներուն վրայ մէկ ծարւութիւն մը ու տենդ մը կը պատճառէր : Ենոր ներգործութիւնը այնչափ շատ եղաւ Տգիտութեանը վրայ՝ ու անանկ անհանգըստութիւն մը պատճառեց անոր , որ ալ ինքը առաջուց ասանկ բան մը ամենեւին քաշած չէր : Աւտի աղաչեց ոչխարները ու այծերը՝ որ իրեն մէկ նոր տեղ մը ցուցընեն :

« Եկոր իմ ետեւէս՝ ըսաւ ան այծերէն մէկը , ու քեզ տանիմ դէպ՝ ի անտառը , որն որ դուն կը տեսնասկոր տա մօտ լեռանը վրայ . աս տեղէն ալ

կրնաս որոշել ան գեղեցիկ Թուչունն
 ներք որ ծառերուն մէջը կերգենկոր” :

ՏղիտուԹիւնը վեր նայեցաւ . բայց
 ինքը հիմայ նայեցաւ որ բան մը ա-
 նանկ պայծառ չի կրնարկոր տեսնալ՝
 ինչպէս որ սովոր էր տեսնալու : Ին-
 չու որ աս լեռներուն օդը շատ տար-
 բեր էր անկէց՝ որն որ ինքը ան առջի
 երջանիկ ձորին մէջը շունչ կառնէր :
 Եւ օդը այնչափ ծանր էր՝ որ կերևար
 Թէ իրմէն ան կենսական զօրուԹիւնը՝
 ու սրտին բացվածուԹիւնը մէկ դի վե-
 րուցեր էր . որն որ ինքը ստրված էր
 զգալ : Աւ աս օդը այնչափ Թանձր էր
 ու միզապատ , որ չէր կրնար մէկ բան
 մը իրեն բուն եղածին պէս տեսնալ :
 Ինչ և իցէ՝ ինքը ան այծին ետեւէն
 գնաց , մինչև որ անիկա ղինքը տա-
 րաւ ան Թուչուններուն եղած անտա-
 ուր , որ անոնց փետուրներուն վրայ՝
 որ ծառերուն վրայ կերգէին կոր ,
 ինքը շատ զարմացեր էր :

“Պիշերը կըմօտենայկոր՝ ըսաւ

այժը . քանզի արևը մարը մտնալու վրայ է բլուրներուն ետևէն : Աս քեզ կրտանիմ մէկ ծաղիկներէ անկողինի մը մէջ , ու անտեղ դուն կը պառկիս կը հանգչիս . ինչու որ դուն այսօր շատ քալեցիր . այսչափ էվելօք քալելովդ՝ անշուշտ յոգնած պիտի ըլլաս դուն : Աւ աս անուշիկ թռչուններուն երգելովը դուն կը քնանաս : Այդը ես նորէն կուգամ քեզի , ու քեզ կրտանիմ նոր զուարճալի տեղերը” :

Տգիտութիւնը իր նորուկ բարեկամին իրեն ըրած բարերարութեանը համար շնորհակալ եղաւ . ու երբոր զանազան գոյներով կարմիր՝ կապուտ՝ ու դեղին ծաղիկներու մէկ անկողինի մը վրայ պառկեցաւ , ինքնիրեն ըսաւ . “Աւ հիմայ ես երջանիկ պիտի ըլլամ” : Աւ քիչ մը ատեն ինքը բերկրեցաւ ան ծաղիկներուն հոտովը , ականջ դնելով ան թռչուններուն երգին , ու զարմանալով անոնց գեղեցիկ փետուրներուն վրայ : Բայց քիչ մը

ատենէն ինքը իմացաւ որ ամենեւին
 Թուչունները եղանակնին չեն փոխեր :
 Աւ քիչ մը ժամանակ ալ անոնց մտիկ
 ընելէն ետքը , իրենց ձայներնին ալ
 եղան խիստ ու անհամ . անանկ որ՝
 վերջապէս ինքը բոլորովին Թուլցաւ
 մնաց , ու իր ականջներն ալ զզուե-
 ցաւ անոնցմէ : Աւ երբոր աս Թուչուն-
 ները իրենց Թւերը կըբանային
 Թուչելու , ինքը յայտնի տեսաւ որ ան
 իրենց գեղեցիկ փետուրները միայն
 դուրսէն առած էին՝ իրենց բնական
 փետուրներուն վրայ՝ որոնք որ մէկ
 խաւարած գոյն մը ունէին :

ՏգիտուԹիւնը ալ գլուխը գետինը
 դնելով ջանք ըրաւ որ՝ ինքըզինքը
 քնացունելու զընէ . բայց ծաղիկնե-
 րուն հոտը՝ որ քիչ մը առաջ անուշ
 էին , այնչափ զօրաւոր եղան գիշեր-
 վան օդէն՝ որ անկարող եղաւ անոնց
 հոտին զիմանալու : Աւստի ելաւ նըս-
 տաւ , ու կըջանար որ մէկ ուրիշ
 հանգչելու տեղ մը գտնայ . բայց ա-

րևը երկար ժամանակ իր մարը մտած
 էր, գիշերն ալ ամպոտ էր, ու մէկ
 աստղ մըն ալ չէր տեսնուիլերկոր :
 Ինքը կատարեալ մթութեան մէջ
 էր . ու կը վախնարկոր մէկ տեղ մը
 շարժելէն՝ որ չըլլայ թէ վտանգի մէջ
 իյնայ : Ինչ և իցէ՝ վերջապէս իր
 ճամբան գտաւ մէկ ծառի մը քով, ու
 անոր տակը քիչ մը չոր տերեւներ
 ժողվեց, ու վար պառկեցաւ աս ա-
 մուր անկողինին վրայ՝ որ քնանայ :
 Իայց հիմայ հովը բլուրներուն վրա-
 յէն փչելով՝ սկըսեց ծառերը խախ-
 տել ու երերցունել . որ ան ծառե-
 րուն ծածկոյթը ալ զինքը չէր կրնար
 ան ցուրտ հովէն պաշտպանել : Իու-
 երը սկըսեցին անտառներուն մէջը
 ձայներնին հանել ճչելով, ու չղջիկ-
 ները իրենց թևերը իր գլխուն կը-
 զարնէին : Ետ ժամանակ անցաւ՝ որ
 Տգիտութիւնը քիչ մը հանգստու-
 թիւն չի կրցաւ գտնալ . իր միտքը

շատ աղէտալի խորհուրդներով էց
 վեցան : Եւ կակուղիկ անդամները
 կը դողդղային ցուրտէն . ու ինքը գի
 շերվան թուշուններուն ձայնէն կը
 վախնար . ու վերջապէս երբոր ինքը
 պառկեցաւ քնանալու , իր քունը շա
 րունակ վշտալից երազներով խռո
 վայոյզ եղաւ : Եւրբեմն կը երեւակա
 յէր՝ որ ինքը կը տեսնայ իր անմեղուկ
 եղբայրը հանգիստ քնացած իր կա
 կուղ խոտերէ եղած անկողինին վրայ ,
 գիշերվան հովէն պահպանված՝ ծա
 ւերուն սարփինայովը : Եւրբեմն կը
 երեւակայէր որ բարի հովիւը եկեր է
 իրեն , ու ինքը կը կանչէ կոր մէկ խո
 ժոռ ձայնով մը , և կը սրդողի կոր ի
 բեն : Ու նորէն ինքը վախուղողի
 մէջ կարթըննար , երեւակայելով որ
 ինքը կը հարածվէր կոր ան առիւծէն ,
 և գրեթէ անոր բերանը ինկեր էր :
 Էտեւեալ առտուն՝ երբոր իր նոր
 ընկերները իրեն տես զալու եկան ,
 սկըսեց զանգատ ընել անոնց իրեն

եկած ձախորդու թիւններուն վրայով ,
տեղնիտեղը հասկըցուց անոնց թէ
ինտոր նեղութիւնով անցուցեր էր
ինքը գիշերը . ու խնդրեց որ եթէ
կարելի է՝ ինքը պիտի ետ դառնայ իր
եղբօրը :

Ան այծերէն մէկը ըսաւ , «Վիւրին
է գիտնալը , որ դուն տակաւին աշ-
խարհը չես գիտերկոր , տղայ ես
դուն : Սենք քեզ չի բերինք որ աս-
չափ սրտաբեկ ըլլաս , երբոր մենք
քեզ հրաւիրեցինք՝ որ ազատ ընենք
քու անձդ ան բեռներէն ու նեղու-
թիւններէն , որոնք միայն թէ տկար-
ները ու վախկոտները կը քաշեն .
բայց ես կըտեսնամ որ դուն փափաք
չունիս վայելելու ան աղնիւ ազատու-
թիւնը , որուն ասչափ կըցանկայիր
դուն քիչ մը առաջ” :

Տգիտութիւնը պատասխան տըլաւ
այծին թէ՛ ինքը իր վրայովը սխալ
կարծեց . և որ ինքը շուտով պիտի
իմանար՝ թէ ինքը գիտէր որ ինտոր

պիտի վայելէր իր ազատութիւնը :
 Վայց՝ ըսաւ նորէն , որ դուք իրաւ-
 ցընէ իս խաբեցիք . ինչու որ ան բո-
 լոր բերկրութիւնները որ դուք ինձի
 շնորհեցիք , ես անյազաբար անոնց
 փորձը առնելով տեսայ որ ուրիշ
 բան չէն՝ միայն թէ խիստ լեղի ու ա-
 նախորժ բաներ :

“ Ղշմարիտ է ատ՝ պատասխան տը-
 ւաւ այժը , որ դուն երէկ քիչ մը ձա-
 խորդութիւններու հանդըպեցար .
 բայց մինչև ետքը ան դիպուածը չի
 պիտի ըլլայ : Այս քեզ այսօր պիտի տա-
 նիմ՝ անանկ մարդագետիները , որ
 անտեղ դուն կրնաս առատութեամբ
 ուտել ան խիստ պատուական խո-
 տերը” :

Տգիտութիւնը հաւատաց այժին
 խօսքին . և թէպէտ իր խոտումունքը
 խաբէական էին , ու գառնուկը նորէն
 գանգատ ըրաւ իր ձախորդութիւննե-
 րուն համար , սակայն իր ընկերները
 օրէ օր իրեն նոր յոյսեր տալու պատ-

ճառները կը գտնային , որ ան բաները զինքը ամենեւին չէին կրնար յագեցունել :—

Ինքը շատ անգամ կը տանէին նոր կանանչոտ տեղեր փնտռելու բլուրներուն ու ապառաժներուն վրայ . է վելօք դէպ 'ի վեր տնկած ու դժուարին էր անոնց վրայ ելլալը , քան թէ ան լեռը՝ որուն վրայէն որ հովիւը զինքը անցուցեր էր , առիւծին բերնէն անիկա ազատելէն ետքը , ու անիկա խաղաղ փարախը տանելու ատենը : Բստեղ իր փափուկ ոտքը քարերէն խոց էր եղած , ու իր ճերմակ բուրդը փուշերով էր պատած , ու գետնին տիղմովը պըլըջտըկված : Բայց աս ամմէն դժուարութիւններէն 'ի զատ՝ որոնց դէմ մէկ բանով մը արժանաւոր հատուցումը չեղաւ , ոչ խարները ու այծերը՝ որ առաջուց այնչափ մարդասիրութիւնով իր հետը վարված էին , հիմայ դադրեր էին իրեն մէկ բարեկամութիւն մը ընել

լէն : Անիկա թող չէին խտար միայն՝
որ ինքըզինքին վըայ ինքը հոգ քաշէ ,
հասլանաւ սկըսեցին անոր հետ կուիւ
ընել՝ ինչպէս որ իրենց սովորու
թիւնն էր իրարու մէջ ընել . մանա
ւանդ երբոր իրենք մէկ չափէ զուրս
զեղեցիկ խոտերու հանդըպէին նէ ,
որ ամմէն մէկը կը փափաքէր ինքը
զինքին համար ափ ձգել , ու իրենց
ընկերները կը վըւընտէին՝ որ անիկա
չի վայելէն :

Բայց աս ամմէն բանէն էվել իրեն
նեղութիւն քաշել տըւաւ անտեղի
վայրենի անասուններուն կանչվըու
տուքը , որն որ ինքը շատ անգամ կը
բէր կէս զիշերվան ատենը , որ ան
ձայները ապառաժ ու ծառախիտ տե
ղերու մէջի քարայրներէն կուգային՝
որոնք որ ան խորունկ անտառին մէջն
էին : Ե ատ զիշեր ինքը առանց բունի
էր անցուցեր , առիւծին վախէն զար
հուրելով , որ ինքը ամմէն բոպէ կը
կարծէր որ՝ զինքը փառատելու և ու

տեղու պիտի գայ : Շատ երկար ձմեռվան գիշերներ ու ամառվան օրեր անցեր էին՝ քանի որ Տգիտու թիւնը իր զուարճալի փարախը թողուցեր էր նէ : Այլ մէկ իրիկուն մը ուշ ատեն բոլորովին ինքը յոքնած՝ ու անչափ ծարւու թիւնով պապակած էր , որ ինքըզինքը գետինը փռեց խոտերուն վրայ՝ իր թշուառ վիճակը ողբալու , ըսելով՝ « Ա՛ւաղ , ինչպէս կը փափաքէի ես՝ ըսաւ մէկ տրտմալից ձայնով մը , որ ան երջանիկ ձորէն խալըսիմ . ուր որ ես հանգիւտ էի բարի հովիւին խնամքին տակը : Ա՛նչ պատուական խոտեր անիկա ինձի կը կերցունէր , ու ինչ պատուական ջուրով իմ ծարւու թիւնս կը զովայունէր ան կենդանի ողբուրներէն : Այլ ինչ տոր ինքը իս կը տանէր զովագին շուք տեղերը հանգչելու՝ երբոր իր թևը իմ վրաս երկընցուցեր էր իս պաշտպանելու համար , որ արեւին ճառագայթը իմ վրաս չի գայ , ոչ ալ անոր

տաքութիւնը : Աւ ո՛հ իմ շատ սիրելի
 լի ընկերս , ո՛հ դուն Խաղաղութիւն
 Խաղաղութիւն , քու հետդ սորված
 էի հանդէլ ան կակուղիկ խոտին վը
 ըայ , ու քու հետդ մէկ տեղ աւտը
 վանց ելլալ՝ որ կանուխկեկ մեր սի
 թելի տէրոջը դիմացը ելլանք : Ա՛խ իմ
 եղբայրս , ինչո՞ւ ես քեզ անգամ մը թո
 դուցի . և աս լեռները ինծի ինչ
 տը վին՝ իմ կորսընցուցած պարզ ու
 խաղաղ բերկրութիւնները փոխելուս
 տեղը : Աւա՛ղ աւա՛ղ , ան բոլոր բերկ
 րութիւնները որ աստեղը ինծի տըր
 վեցան , բան մը չի բերին , միայն թէ
 ամմէն օրվան ու շատ լեղի ձախոր
 դութիւններ : Աւ ո՞ւր է ան ազատու
 թիւնը՝ որ ես իմ անձիս խոստացայ :
 Էիմայ ես աստեղ զարհուրանքի ու
 տառապանքի մէջ եղած գերի մըն
 եմ . ու անանկ բաներու կըցանկամ՝
 որ ամենեւին իս չեն կիշտացուներ :
 Իայց քանի որ ես մէկ հնազանդ
 գառնուկ մըն էի իմ հովիւիս՝ որ ին

քը իս սիրեց, ու իր արունը ինձի համար թափեց, կատարեալ ազատութեան մէջ էի: Կնչու որ ինքը ինձի սորվեցուց՝ բանի մը չի ցանկալ, միայն թէ ինձի աղէկ եղած բաներուն. ու ան ամմէն ինձի աղէկ եղած բաներն ալ ինքը տըլաւ ինձի”:

Երբոր ինքը ասանկ իր անձին վերայ ողբ կընէրկոր՝ իր ճայնը կտրըվեցաւ տառապանքի մէջ եղող մէկու մը հառաչանքներէն: Ուստի դարձաւ իր բոլորտիքը, տեսաւ մէկ վերաւորած ոչխար մը՝ իր ճամբան շիտկած դէպ’ի իրեն մեծ դժուարութիւնով մը, ու հազիւ եկաւ անտեղը հասաւ, ուր տեղ որ դառնուկը կեցած էր. ու անտեղ գետինը փռեց ինքըղինքը. ու կերևար թէ մահուան վերջին տաղնապին մէջն էր:

“Ե՛ղբայր՝ ըսաւ անիկա Տգիտութիւնին՝ մարած ճայնով մը. ինչո՞ւ համար դուն աստեղ ծուլութիւնով

կեցեր ես . դուն չե՞ս գիտեր որ՝
առիւծը հիմայ լեռանը գլուխն է :
Ելեր կայնէ՛ , ու կրցածիդ չափ շու-
տով շուտով գնա՛ , թէ որ կը վախնաս
առիւծին բերանը իյնալէն , ինչպէս
որ ես ինկայ առիւծին ճանկը ” :

“ Ո՛ւր փախչիմ ” , հարցուց գառ-
նուկը դողդըղալով :

“ Միայն մէկ տեղ մը կայ՝ ըսաւ
ոչխարը , ուր որ կրնաս ազատ ըլլալ
առիւծէն . ու անիկա է ան ոչխարնե-
րուն փարախը , որուն մէջը ըլլալը
այնչափ ճանճրալի երևաց քեզի :
Բայց թէպէտ դուն առանց մէկ նե-
ղութեան մը կրցար անկէց խալըսիլ ,
սակայն աստեղաց հոն տեղ անցնիլ
երթալը այնչափ շատ դժուար է որ՝
մեզմէ քիչերը յոյս առին առիւծէն
խալըսելու ան ճամբան ընել ” :

“ Ուրիշ ո՛ւր տեղ կրնամ եր-
թալ ” , հարցուց գառնուկը մէկ է-
վելի դողով մը :

“ Ո՛ւր որ երթաս նէ՛ մի և նոյն

քան է, պատասխանեց ոչխարը վասն զի քանի որ դուն աս լեռներուն վրայ կը կենաս, ամենեւին չես կրնար դուն շատ ժամանակ ազատ ըլլալ առիւծէն” : Աիշդ աս ատեններն ալ մէկ հօտ մը ոչխար կը տեսնըվէր՝ որոնք որ լեռնէն վար կը վազէին սաստկութեամբ, որպէս թէ կը հալածվէին կոր :

Բայց անատենը այնչափ մութ էր որ՝ Տգիտութիւնը չէր կրնար պայծառ տեսնալ, թէ իր թշնամին անոնց ետեւէ՛ն էր մի՛ թէ չէ : Իր վիշտը հիմայ այնչափ մեծ էր որ՝ ինքը մէկ աղետալի ձայնով մը կը կանչէր թէ, “ Ի՛նչ պիտի ընեմ ես՝ որ առիւծէն խալըսիմ” :

“ Ո՛հ՝ թշուա՛ռ գառնուկ, պատասխանեց վերաւերած ոչխարը՝ կտրուկ կէս շնչառութիւնով մը : Աս անգամ մը որ քեզ ազատութեան մէկ տեղէ մը խոտորցունելու յանդգնեցայ, հիմայ թէ որ կարելի էր՝ կը ցուցընէի

քեզի քու անտեղը դառնալուդ կերպը՝
 — Երանի թէ ես քեզ անանկ հան-
 գիստ փարախէ մը դուրս ելլալու
 յորդորելուս տեղը, խնդրէի որ իս
 ալ ընդունին անտեղ : Բայց ինչ օ-
 գուտ՝ ես ձեր տէրը անարգեցի, ու
 առիւծին զօրութիւնը բանի տեղ չի
 դրի, ու իմ հպարտութիւնս իս կոր-
 ծանման մէջ բերաւ : Վու ձգած
 փարախդ՝ նորէն ըսաւ անիկա, արև-
 ելքին կողմը կիցնայ : Ա՛ր նայէ, տես
 ան լուսաւոր աստղը արևելքին կող-
 մը, բայց աչվընէրըդ տնկէ՛ անոր վը-
 րայ, ու վազէ քու փրկութեանդ հա-
 մար” : Աչխարը աս խօսքը զրուցելով՝
 շունչը հանեց բերնէն : Վառնուկին
 սիրտը երախտադիտութեամբ լեցվե-
 ցաւ անոր ըրած վերջին բարերարու-
 թեան զօրծին համար . և ինքը մէկ
 ըռպէ մը չի ձգեց անոր ըսած խրա-
 տին մտիկ ընելու, ու շուտով որչափ
 կարելի էր՝ դէպ՛ի ան ձորը երթա-
 լու : Թէպէտ դրեթէ յոյս մը չունէր՝
 որ ապահով պիտի հասնէր անտեղը,

բայց շարունակ բոլոր գիշերը ինքը
կըվագէր, ու կըլսէր իր ետեւէն՝ որ
ոչխարները մէ՛ մէ՛ կըկանչէին, ու
առիւծը հեռուէն կըմուրնչէրկոր :
Ինքը իր աչքը տակաւին ան արևելքի
կողմի լուսաւոր աստղին վըայ տնկած
էր, մինչև որ ան աստղը աներևոյթ
եղաւ, ու աւտըվան լոյսը սկըսեց ծա-
ղել անոր տեղը : Ա՛ն թեթևութիւնը՝
որով ինքը կըվագէր կոր, իր ընկեր-
ները հեռուն թողուցեր էր իր էտին :
Ասկէց՝ ի զատ՝ անոնցմէ շատերը ան
մեռնող ոչխարին ցուցըցած շիտակ
ճամբային ճշդիւ հակառակը գացեր
էին : Աւտըվան արևը ելած ժամա-
նակին Տգիտութիւնը մեծ ուրախու-
թեան մէջ գըտնըվեցաւ, որ ինքը
հասեր էր անտեղ՝ ուրկէց ան փա-
րախը ալ կըտեսնըվէր կոր : Բայց
ինքը հիմայ այնչափ հոգնած էր իր
ճամբուն մէջ գտած գըթուարութիւն-
ներովը (ինչպէս որ ոչխարը իրեն
յայտնի զըուցեր էր՝ որ ան դիպուա-

Տը պիտի ըլլայ) որ անկարող էր ալ
 էվել ի առաջ երթալու : Ուստի փրո-
 վեցաւ գետինը խոտի մը վրայ՝ բոլո-
 ըրովին հոգնած ու մարած : Հիմայ ալ
 ինքը սկըսեց քննել ան փարախին
 դուրսի կողմը . կըյուսար որ ինքը
 պիտի կրնար անտեղ երթալ այնչափ
 դիւրութեամբ՝ որչափ որ առաջ խա-
 լըսէր էր անկէց) : Բայց թէպէտ ին-
 քը մէկ դժուարութիւն մը չէր գտեր
 ան առջի անգամը անկէց ելլալէն ,
 բայց ան գետնին դիրքը այնպէս էր՝
 որ ինքը իմացաւ թէ՛ անկարելի էր ,
 որ նորէն անտեղ զինքը ընդունին .
 միայն թէ ան նեղ դուռնէն , որուն
 բանլիքը հովիւին քովը պահված էր :

Հիմայ ինքը մէկ նոր դժուարու-
 թեան ու ալ էվելօք վախի մը մէջ
 ինկաւ , որ չըլլայ թէ՛ որովհետեւ ին-
 քը այնչափ շատ բարկացուցեր էր իր
 բարի տէրը , որ զինքը իր առջի շը-
 նորհքին բնաւ չի դարձունէ : Բայց
 նորէն ինքը միտքը բերելով թէ ին-

տո՛ր անիկա զինքը կըսիրէր , որ իւրեն համար իր արոււնը թափեր էր . նաև երբոր ճամբայէն մոլորեր էր՝ ու գաւիթէն դուրս խոտորեր էր , որուն մէջն որ մնալ իր սարտքն էր , ու ինքը որ առիւծին բերանը ինկեր էր : Եւ հիմայ ասոնք յիշելով՝ կաշխատէր ինքըզինքը մխիթարել ասանկ իր տէրոջը սիրոյն վրայ խորհելովը :

Երբոր աս բաները իր միտքէն կանցնէին , նայեցաւ որ ան փարախին դուռը բաց էր՝ ու ինքը հովիւը դուրս ելեր՝ խաղաղութիւնը իր գերկը առած կըտանէր կոր : Ի՛նչպէս իր սիրտը թունտ ելաւ՝ երբոր տեսաւ իր ազնիւ բարեկամը՝ ու երջանիկ եղբայրը : Ինքը ջանք ըրաւ՝ որ ելայ կայնի՛ վազէ անոնց դէմը . բայց իր միտքը նորէն վախով լեցվեցաւ , ու նայեցաւ որ զօրութիւն չունէր շարժելու : Եսանկով ինքը նորէն կունակին վրայ ինկաւ սառկեցաւ խոտին վրայ՝ գրեթէ յուսահատութեան մէջ :

Բայց իր աջ վրէժները շարունակ տնկեց
 դէպ'ի իր բարի հովիւին վրայ, որ
 սկըսեր էր ան լեռնէն վեր ելլալ .
 որուն վրայ որ ան զուարճալի խոտա-
 ւէտ տեղը կար, որ իր երջանիկ օ-
 րերը իր տէրը շատ անգամ ցուցըցեր
 էր իրեն հեռուէն . ու ինքը խոտա-
 ցեր էր որ անիկա անտեղ պիտի տա-
 նի, թէ որ զինքը սիրելու ըլլայ, ու
 իրեն ձայնին մտիկ ընելու ըլլայ : Աս
 խոտաւէտ տեղը մտնալը մէկ ոսկիէ
 դուռնէ մըն էր, որ ան այնչափ շատ
 լուսաւոր էր՝ որ արևի պէս կը փալ-
 փըլար : Աւ երբոր հովիւը ան լեռա-
 նը ծայրը մօտեցաւ նէ՛ ան ոսկեղէն
 դուռը բացվեցաւ . ու Խաղաղու-
 թիւնը անտեղ ներս մտաւ : Աւ դուռը
 բացվելու ատենը՝ անանկ շատ անուշ
 տաղերու ձայներ դուրսը լըսվեցան,
 որ հովիւներուն աս կերպով իրենց
 ոչխարները զըւարճացունելու հա-
 մար ունեցած սովորութենէն աւելի
 էր :

Ան վայրկեանը՝ մէկ շատ տարբեր
 ձայն մը լավեցաւ Տգիտութիւնին ա-
 կանջին, որ կը վախնար ու կը դողդը-
 դար. ու դարձուց իր գլուխը չորս
 կողմը՝ տեսաւ իր ահագին թշնամին
 առիւծը, որ կայներ էր ան լեռանը
 գլուխը իր էտին. ու իր սոսկալի ա-
 դադակը ապառաժներէն ապառաժ-
 ներուն մէջ արձագանգ կը հանէր :
 Առիւծը հիմայ սկըսեց անդադար
 վազելով մը բլուրէն վար իջնալ, ու
 իրեն քալվածքը դէպ 'ի Տգիտու-
 թիւնին կայնած տեղը շտկըված էր :
 Ղիշդ անատենն ալ հովիւը երևցաւ,
 որ բլուրին մէկալ կողմէն կը մօտե-
 նարկոր. ու Տգիտութիւնը աս մէկ
 խօսքը կարծեց որ կը լսէ, որպէս թէ
 իրեն կը սվէրկոր, « Մի վախնար
 պզտի Գառնուկ. ես կարող եմ փրը-
 կելու բոլորովին ան ամմէնը՝ որ ինձի
 կուգան » : Անատենը իր սիրտը յուսով
 լեցվեցաւ. և բոլորովին քաջալերու-
 թիւն մը առնելով, ելաւ կայնեցաւ

զետնէն ինքիրմէն : Հիմայ առիւծը
 իրեն մօտենալու քանի մը քայլ ու
 նէր . բայց ինքը ցաթկելով ձգեց ին
 քըզինքը հովիւին ոտքը , և դէպ 'ի
 անոր վրայ տնկեց իր հեղ ու ապաշ
 խարող աչվըները :

Այլ անկէ ետեւ ինչ եղաւ աս զառ
 նուկին նէ՛ ես չի լսեցի . բայց այն
 պէս զիտեմ ան բարի Հովիւին բա
 րերարութեանը վրայով , որ ինքը
 շատ կրկամի ողորմիլ , ու խալըսել
 ան զառնուկները , որ զիտնալով ի
 րենց անիկա սրդոյցունելը կուգան
 նորէն դէպ 'ի անոր թողութեան ու ա
 զատութեան համար : Ար անով ես
 կիմանամ թէ՛ ինքը անգամ մըն ալ
 նորէն Տգիտութիւնը կըխալըսէ ան
 առիւծին զօրութենէն , և կըսորվե
 ցունէ անոր՝ որ մէկ հաւատարիմ ոչ
 խար մը ըլլայ իր հօտին մէջը . և աս
 ալ կիմանամ թէ աս երջանիկ զառ
 նուկը որ դարձաւ՝ անկէց ետքը միշտ
 զիտէր որ միայն իր Հովիւին փարա

Խին մէջը հանգստութիւն կայ . և
 թէ՛ անոր պատուէրները պահելովը
 կըլլայ հանգստութիւն ու ասպահով
 կեանք յաւիտեանս յաւիտենից :

Վ. Ն. Գ.



46
42

ՅԵՆԿ



Ըմբէնէն աղէկ տղան	5 :
Նըրկինք	10 :
Կարդա , ու պիտի իմանաս	14 :
Կայէն	18 :
Օ՛եծկըլուք	22 :
Ի՛նչպէս պէտք է փրկըլիլ	27 :
Ս՛էկ պզտի տղայ մը	32 :
Նըրկու՛ գառնուկներուն պատմութիւլ	37 :

ՏՂԱՅՈՅ

ՍՆՐԺԻՉ

Տըղաքներ՝ չլլայ ու մեկը
ձեզ խաբէ, արդարութիւն
գործողը արդար կը լլայ :
Ի . Յովն . Գ . 7 :

Ի . ԶՄԻՒՌՆԻՆ

ՌՄ ԶԷ